+-

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
,,ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ,,
ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ Հայոց լեզու եւ գրականություն

Թեմա՝ Պատմավեպի ուսուցման առանձնահատկությունները ավագ դպրոցում

Հետազոտող՝ Մելինե Գրիգորյան

Սյունիքի մարզի ,,Ա.Բալասանյանի անվան Կորնիձորի միջնակարգ դպրոց,, հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ

Ղեկավար՝ Գոհարիկ Մկրտչյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1 Պատմավեպի ուսուցման առանձնահատկությունները ---------- 6

ԳԼՈՒԽ 2 Պատմավեպի ուսուցումը ----------8

ԳԼՈՒԽ 3 .,Սամվել պատմավեպի ուսուցումը---------- 11

ԳԼՈՒԽ 4 .,Գևորգ Մարզպետունի պատմավեպի ուսուցումը ---------- 15

ԳԼՈՒԽ 5 Դերենիկ Դեմիրճյան ,Վարդանանք պատմավեպի ուսուցման առանձնահատկությունները ----------17

Պատմավեպերի լեզուն և ոճը_____20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....21

Գրականության ցանկ _____23

## Ներածություն

Գրականությունը ոգու և անհատականության դաստիարակության հզոր աղբյուր է ։ Գեղարվեստական պատկերների բացահայտման միջոցով գրականությունը մեզ տալիս է բարու և չարի , ճշմարտության և ստի հասկացությունները ։ Օգնում է մեզ տեսնել մարդու ներքին գեղեցկությունը , սովորել հասկանալ և գնահատել այն ։ Այն ընդլայնում է մարդու մտահորիզոնը , վարժվում է մտածված ընթերցանությանը , հասկանալու այն գաղափարները , որոնք հեղինակն արտահայտում է պատկերների միջոցով ։ Տեքստի վրա գրագետ աշխատանքը հարստացնում է մարդու բառապաշարը , զարգացնում գրական լեզվին և գեղարվեստական տարբեր հնարքներին տիրապետելու կարողությունը ։

Գրականությունը ջնջում է ժամանակի սահմանները ։ Այն մեզ ծանոթացնում է որոշակի դարաշրջանի ոգու հետ ։ Գրականության կարևոր կողմն այն է , որ այն ընդլայնում է իր ընթերցողների հորիզոնները ։ Հնարավորություն է տալիս հասկանալու , թե աշխարհի այլ մասերում մշակույթն ինչպես է տարբերվում իրենցից: Ընթերցողները դառնում են ավելի ընկալունակ աշխարհի տարբեր մասերում մարդկանց յուրահատուկ տարբերությունների նկատմամբ ։ Այն բացում է պատուհան դեպի անցյալ ՝ թույլ տալով ընթերցողներին տեսնել , թե ինչպես են ապրել իրենց նախնիները և այլ մարդիկ , ինչպես երկիրը , որտեղ նրանք ապրում են, դարձել է այն , ինչ որ այժմ գոյություն ունի ։ Գրականությունը կարող է նաև թույլ տալ իր ընթերցողներին նայելու իրենց նախորդների թույլ տված սխալներին և խուսափել դրանցից ապագայում ։

Մեծ է գրականության դերը աճող սերնդի աշխարհայացքի ձևավորման, ճանաչողական գիտելիքների հարստացման և բարոյական ու գեղագիտական դաստիարակության գործում:

Հայ գրականության դասընթացի հիմնական նպատակներից մեկը անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը , անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը , ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին , գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործմամբ, նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն , պատասխանատվություն , հաստատակամություն , բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ ։ Հայ գրականությունն անցել է երկար ճանապարհ, հատկապես հայ դասական

գրականության գոհարները կրթել ու դաստիարակել են մի ամբողջ ժողովուրդ, ձևավորել ողջ ժողովրդի արժեհամակարգը: Ուսուցանելով գրականություն առարկան՝ ուսուցիչը թեմայի բովանդակության միջոցով աշակերտների մեջ սերմանում է բարոյական, գեղագիտական, ժողովրդավարական և հայրենասիրական վերաբերմունք, արժեքներ: Գրականության և լեզվի դասերը դառնում են լավագույն միջոցը աշակերտների մեջ լավը, գեղեցիկը, նվիրականը, արժեքավորը, մնայունը սերմանելու համար: Գրականության ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով:

Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում:Հայ գրականության դասագրքերում ունենք բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք իրենց փոքրիկ ներդրումն ունեն՝ երեխաների մոտ ձևավորելու հայրենասիրություն, բարոյական, մարդկային վեհ արժեքներ, որոնք կօգնեն իրենց առօրյա կյանքում ճիշտ որոշումներ կայացնելու, բարին գործելու, ընկերասեր լինելու, հայրենասիրությունը անձնական շահերից վեր դասելու: Դաէ ր մեզ հորդորում նաև մեծն ուսուցիչը՝ Խ. Աբովյանը՝

• Շունչդ տո՛ւր, հոգի՛դ, բայց քո հայրենիքը մի տուր թշնամյաց:

Այսպիսի խոսքերը կարող են հայրենաճանաչողական դաստիարակչության խթան լինել ուսուցման ընթացքում, որովհետև ուսուցչի դերը աշակերտի կյանքում շատ ավելի մեծ է. աշակերտը վստահում է ուսուցչին ու կարևորում նրա խոսքը: Հայոց պատմության էջերը ողողված են հայրենասիրության արժեքի դիմաց մեծ գին վճարած հայորդիներով, որոնց դաստիարակությունը սերմանել է նաև ուսուցիչը: Հուզական գործառույթը կարևոր դեր ունի նաև առօրյա շփումներում: Հուզական զգայունակությունը, կարեկցանքը, ապրումակցումը, անձի, այլոց նկատմամբ կարեկցական վերաբերմունքի դրսևորումներ են:

Հասարակական-քաղաքական կյանքում կատարվող տարաբնույթ երևույթները ազդում են հատկապես նոր սերնդի մտածողության , ազգային արժեքների նկատմամաբ մոտեցումների և հոգևոր ընկալումների վրա : Ապագան կերտողը հայ հոգևոր արժեքները պահպանողն ու շարունակողն , սակայն , հենց այս սերունդն է լինելու , և նրա վաղվա գործելակերպը ու ազգապահպան դերը պայմանավորված է այսօր ձեռք բերված գիտելիքներով ու դաստիարակությամբ :

Պայմանավորված է նրա՝հոգևոր և ազգային արժեքների ճանաչման ու գնահատման չափանիշներով

, դրանց նկատմամբ դրսևորվող պատասխանատվության , հպարտության զգացումներով և կյանքում այդ արժեքներով ապրելու խորը գիտակցությամբ : Այլ կերպ ասած՝ պայմանավորված է անհատի արժեքային համակարգի , ազգային հոգեկերտվածքի ձևավորմամբ , որի ոչ այնքան դյուրին իրականցման պատասխանատվությունն ու բարդությունն ընկնում է դպրոցի , հատկապես հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչի ուսերին :

Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է մատնանշել այն ուղիները , որոնց միջոցով պատմավեպերի ուսուցման ժամանակ սովորողների մոտ կձևավորվի արժեքային համակարգ:

## Պատմավեպի ուսուցման առանձնահատկությունները

Գրականության ուսումնասիրությունը սովորողի բառապաշարի հարստացման, պատկերավոր մտածողության, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և գրական ճաշակի ձևավորմանը զուգընթաց աշխարհաճանաչողության, ինքանաճանաչման, ինքնագնահատման արդյունավետ միջոց է, և մեծապես նպաստում է բարձր բարոյական գծերի՝ հայրենասիրության, մարդասիրության և սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը, զգացական –հուզական, գաղափարական ու հանրակեցական դաստիարակության:

Ուսուցիչներիը, առհասարակ դպրոցի հետ մոտիկից շփվողներն այսօր հաճախ են դժգոհում գրականության դասերի նկատմամբ աշակերտների անտարբերությունից:Հիմա՝ տեխնիկայի բարձրագույն նվաճումների ժամանակահատվածում ,դժվար է աշակերտին ստիպել, որ կապվի գրքին, իր ներաշխարհում փայփայի և աշխատի նմանվել գրական այս կամ այն հերոսին: Բայց դա միայն մասամբ է իրական և նուրբ դիտողականություն ունեցող ուսուցիչը անմիջապես կարող է նկատել, թե ինչպես են փայլում աշակերտի աչքերը մի լավ գեղարվեստական բնագրի գեղեցիկ ընթերցումից, գրավիչ բացատրությունից, ինչպես նաև էպոսի, պատմավեպերի ճիշտ ուսուցումից: Պետք է աշակերտի մոտ արմատավորել այն գիտակցությունը, թե ազգային արժեքները հավիտենական են, ժամանակի ընթացքում փոխում են իրենց ձևը, բայց բովանդակությունը նունն է մնում:

Պատմավեպի ուսուցումը լայն առումով ունի հին պատմություն՝սկսած V դարից: Եվ, իհարկե, կան գրականության ուսուցման մեթոդիկայի հետ կապված մի շարք ձեռնարկներ, նաև մեծաքանակ և առաջնակարգ հետազոտություններ,որոնց շնորհիվ կընդլայնվի պատմավեպի մասին ունեցած պատկերացումները:

Գեղարվեստական մյուս գործերի հետ համեմատելիս պատմավեպն ավելի մեծ ուշադրություն է պահանջում և՛ գրողից, և՛ուսուցանողից, և՛ աշակերտից:

Դպրոցն ազգային դաստիարակության հզոր գործոնն է, նա է կերտում ապագա քաղաքացուն, դաստիարակում հայրենասեր և մարդասեր անհատ:

Այսօր երեխաները խուսափում են ծավալուն գործեր կարդալուց, չեն կարդում պատմավեպեր: Պատմավեպն ուսուցանելուց առաջ ուսուցիչը պետք է ազդի երեխաների մտածողության վրա, դրդի նրանց հայրենասիրության, երկը ուսումնասիրելու ցանկություն առաջացնի:Որևէ պատմավեպ ուսումնասիրելուց առաջ աշակերտը նախ պետք է իմանա գրության շարժառիթը, որովհետև առանց անհրաժեշտության կամ այլ խթանի պատմավեպ չի գրվում:Օրինակ Ռաֆֆին «Սամվելը» գրել է 19-րդ դարի ութսունական թվականներին, երբ ցարական կառավարության հրամանով փակվել են հայկական

դպրոցները:Մուրացանը «Գևորգ Մարզպետունին» գրել է, 1895-1896 թթ ջարդերի շարժառիթով,

Դ. Դեմիրճյանը «Վարդանանքը» գրել է 2-րդ աշխարհամարտի տարիներին:Ուսուցչի 1-ին խնդիրը այն է, որ աշակերտին ցույց տա պատմական ծանր ժամանակահատվածների աղերսները, գրողի միտումը՝ վեպի և նախկին իրադարձությունների միջոցով ազգին զորավիգ լինելու:

Պատմավեպի գրական- գեղարվեստական արժեքը հասկանալուց առաջ աշակերտը պետք է գնահատի դրա պատմականությունը, արժանահավատությունը; Այդ նպատակով աշակերտին պետք է ծանոթացնել վեպի սկզբնաղբյուրներին :

## Պատմավեպի ուսուցումը

Հայոց լեզվի և հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, քաղաքացու արժեքային համակարգի ձևավորման գործում: Ավագ դպրոցում հայ գրականության առարկայի դասավանդման նպատակը գրական ստեղծագործությունների ուսումնասիրությունն է, որի ընթացքում գիտելիքներ հաղորդելուց բացի ձևավորվում են քննադատական վերաբերմունք, գրական երկերը ընկալելու, վերլուծելու , գնահատելու, տվյալ գրական երկում այսօրվա ոգուն համապատասխան երևույթներն առանձնացնելու, հերոսների արարքների հիմքերը նկատելու, ապրումակցելու և հիմնավոր պատճառաբանություններ տալու կարողություններ:

Հիմք ունենալով հանրակրթության պետական և հայ գրականության առարկայական չափորոշիչները՝ ուսուցման գործընթացը պետք է կազմակերպել այնպես, որ ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ձևավորված կարողությունները, հմտությունները, արժեքներն ու դիրքորոշումները հնարավորինս կիրառվեն առօրյա կյանքում, տարբեր իրավիճակներում սովորողները կարողանան արագ և արդյունավետ կողմնորոշվել, արձագանքել և առաջարկել լուծումներ: Նշված կարողունակությունները կարող են ձևավորվել ու զարգանալ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի , գործունեության տեսակների, տեխնոլոգիաների, մեթոդների կիրառման արդյունքում: Թեմայի՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ ուսուցումը կնպաստի սովորողների ընթերցասիրությանը, դասապրոցեսին կհաղորդի ակտիվություն ու հետաքրքրություն ուսուցանվող նյութի նկատմամբ, գիտելիքների ձեռքբերման գործընթացում կապահովվի սովորողների ակտիվ ու անմիջական մասնակցությունը: Կզարգանա սովորել սովորելու կարողունակությունը: Սովորելու ընթացքում աշակերտների մեջ կձևավորվի իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Պատմավեպի ուսումնասիրումը նոր մոտեցմամբ կնպաստի միջառարկայական կապերի ստեղծմանը, նյութը համակողմանի ուսումնասիրելուն: Հետազոտության նպատակը համացանցային տեղեկույթի և գեղարվեստական գրքի միջև անհրաժեշտ կապի ստեղծումն է , որը կհետաքրքրի սովորողին, սեր արթնացնի գրքի ու ընթերցանության նկատմամբ: ՏՀՏ-ի կիրառումը կնպաստի ուսուցման որակի բարձրացմանը, դրանց կիրառմամբ դասը կդառնա հետաքրքիր ու տեսանելի:

Պատմավեպերի ուսուցումը հիմնականում պետք է կատարվի հետազոտական մեթոդի միջոցով՝ աշակերտների համագործակցային, ինչպես նաև անհատական ուսումնական գործունեության շրջանակներում՝ ուսուցչի ղեկավարությամբ և կողմնորոշմամբ:

Հետազոտական մեթոդը պահանջված է աշակերտների ինքնուրույն-որոնողական գործունեության համար: Աշակերտի համար կարևոր հիմնախնդիրը գրական երկի ստեղծագործական պատմությունն է:

Գործնական առաջադրանքների միջոցով նախ աշակերտները բացահայտում են՝ ինչ է պատմավեպը:

, Ստորև ներկայացնենք առաջադրանքներ, որոնց լուծումը պահանջում է խմբային աշխատանք

1.Ռաֆֆու «Սամվել»-ը պատմավեպ է, որովհետև նրա մեջ տրված է՝

ա)հեղինակի ապրած ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների գեղարվեստական նկարագիրը

բ) Մեր պատմության հեռավոր անցյալում կատարված պատմական իրադարձությունների գեղարվեստական նկարագիրը:

2.Պատմավեպում գործող հերոսները՝

ա)հեղինակի երևակայության ծնունդ են

բ)իրական, պատմական անձնավորություններ են ՝վերածված գրական կերպարների

գ)հեղինակի ժամանակակիցներն են՝ դարձած գրական երկի հերոսներ:

3.Պատմավեպում տրված է՝

ա)հեղինակի ապրած ժամանակաշրջանի, հասարակության միջավայրի և կենցաղի նկարագիրը:

բ)ինչ-որ մտացածին միջավարի նկարագիր

գ)պատմական այն անցյալի միջավայրի ու կենցաղի նկարագիրը, որի մեջ ապրել և գործել են վեպում հանդես եկող կերպարները:

4.Ի մի բերելով ճիշտ պատասխանների տարբերակները՝ընտրե՛ք պատմավեպի ձևակերպման ճիշտ տարբերակը։

Պատմավեպ է կոչվում է այն ծավալուն արձակ ստեղծագործությունը, որի մեջ՝

ա) տրված է ժողովրդի պատմական անցյալի դեպքերի և իրադարձությունների, այդ շրջանին բնորոշ միջավայրի ու կենցաղի գեղարվեստական նկարագիրը, իսկ պատկերված հերոսները գրական կերպարի վերածված պատմական անձնավորություններ են։

բ)Պատկերված են հեղինակի ապրած ժամանակաշրջանի իրադարձությունները, կենցաղը և մարդիկ։

Աշակերտները պետք է ընտրեն ճիշտ տարբերակները։

Երեք պատմավեպերը անցնելուց հետո մշակվում են նոր առաջադրանքներ, որոնք նպատակ են հետապնդում համեմատության ու զուգորդման միջոցով բացահայտելու՝

1)այդ երեք պատմավեպերի միջև եղած ժանրային ընդհանրությունները

2)նրանցում պատկերված պատմական դարաշրջանների և իրադարձությունների տարբերությունները,

3) հեղինակների՝ պատմական անցյալը ներկային մոտեցնելու և այդ ճանապարհով ժամանակակից խնդիրներին պատասխան տալու մոտեցումների տարբերությունը,
4)յուրաքանչյուր երկի կառուցվածքի, գաղափարական միջոցների տիպականացման ու հեղինակների գրական հայացքների տարբերությունը,

5) գրողի անհատականության կնիքը կրող տարրերի՝ լեզվի, ոճի, պատմելու, պատկերներ ստեղծելու առանձնահատկությունները:

Կարևոր է նաև պատմական աղբյուրների ճանաչումը, բացահայտում, իրականի և գեղարվեստականի տարբերությունները հասկանալն ու մեկնաբանելը։
Կարելի է կազմակերպել նաև դաս-դասախոսություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.
ա)Պատմավեպի գրման շարժառիթները, պատմական և ժամանակակից խնդիրները
բ)Պատմավեպի թեմայի ընտրության հանգամանքները, նմանությունը տարբեր ժամանակաշրջանների պատմաքաղաքական իրադարձությունների միջև և այլն։

## «Սամվել» պատմավեպի ուսուցումը

Քանի որ գրական նյութի ուսուցման նպատակը ոչ միայն գիտելիք տալն է , դրանով աշակերտին զինելը, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը, ուստի ուսուցչի առաջնահերթ խնդիրներից պետք է լինի հայրենասիրության մասին ամբողջական պատկերացում տալը, հայրենասիրության դաստիարակումը ։

Վեպի « Հառաջաբան»-ում Ռաֆֆին գրում է.«**Խրախուսվելով այն գաղափարով, թե որքան մեծ կրթողական ազդեցություն ունի պատմական վեպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է յուր նախնյաց մեծագործությունները և աշխատում է հետևել նրանց առաքինություններին, տեսնում է նրանց մոլությունները, աշխատում է հեռու պահել իրան նրանց կատարած սխալներից...»** ։

**«Մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ...»: (Ռաֆֆի )**

Կարծում եմ , որ այդպիսին է «Սամվել» պատմավեպը։ Վեպի դրական կերպարների ուսումնասիրությունը, նրանց արարքների հիմնավորումներն ու վերլուծությունները կնպաստեն սովորողի մեջ հայրենասիրություն դաստիարակելուն։ Աշակերտը կճանաչի ու կսիրի իր հայրենիքը, նրանով և նրա համար կապրի, իսկ անհրաժեշտության դեպքում հանուն հայրենիքի անձնազոհության կգնա։

Բնագրի խորազնին ուսումնասիրությունը կարևոր է, որովհետև Ռաֆֆու «Սամվել» վեպը հայ դասական պատմավեպի գեղարվեստական խոշոր նվաճումն է։ Ըստ գրականագետ Ս.Սարինյանի՝ «Ռաֆֆին «Սամվել» վեպում վերծանեց IV դարի երկրորդ կեսի հայոց պատմության իրադարձությունները։ ... Չորրորդ դարը բեկման մի չափազանց յուրահատուկ ժամանակաշրջան էր հայ ժողովրդի պատմության մեջ։ Արտաքին և ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք շատ կողմերով նախանշեցին գալիք դարերիպատմության ընթացքը»:

Վեպն ուսումնասիրվում է 10-րդ դասարանում։ «Ռաֆֆի» թեմային ծրագրով հատկացված է 8 ժամ, որից 6-ը նպատակահարմար ենք համարում հատկացնել վեպի ուսումնասիրմանը՝ հետևյալ բաշխումով. 1.Ռաֆֆու ռոմանտիզմը։ Գաղափար պատմավեպի մասին։ 2.«Սամվել» պատմավեպի հիմքը, գրության շարժառիթը։ 3.Կառուցվածքը, սյուժեն և բովանդակությունը, գաղափարը 4,5,6.Պատմավեպի կերպարները

Աշակերտները նախապես պետք կարդացած լինեն վեպը, որպեսզի ուսուցչի ուղղորդմամբ կատարեն անհրաժեշտ գրառումներ և նշումներ։ Այսօր դպրոցահասակ պատանիներից

շատերը վախով են նայում մեծածավալ երկերին, դրանց ուսումնասիրման ժամանակ ցուցաբերում անտարբերություն: Ուսուցման գործընթացում դասավանդողը կանգնում է մի շարք դժվարությունների առջև, որոնք անհրաժեշտ է հաղթահարել:Առաջին հերթին անհրաժեշտ է հիմնավորել նյութի ուսուցման կարևորությունը, որովհետև վեպում արտահայտված իրադարձություններն ու կերպարների մտքերը, գործողություններն արդիական են նաև այսօր: Հայրենիքի ու հայրենասիրության գաղափարը պիտի առաջնային լինի բոլոր ժամանակներում ու յուրաքանչյուրի համար: Եթե մինչև հիմա հայ պատանին միայն պատմություններով գիտեր իր ժողովրդի կյանքում կատարված հերոսությունների, ողբերգությունների, պատերազմների ու թշնամիների մասին, այսօր նա դրա ականատեսն է դարձել, շատերի ընտանիքներում պատերազմը թողել է անդառնալի կորուստներ: Համոզված ենք, որ վեպի ճիշտ մատուցումը կնպաստի ապագա հայրենասերների դաստիարակությանն ու հայրենիքը պաշտպանողի բարձր հոգեբանություն ունեցող անհատի ձևավորմանը: Ժամանակակից մեթոդների ու ՏՀՏ կիրառմամբ կարող ենք ուսուցման պրոցեսը դարձնել հետաքրքիր, որն էլ իր հերթին կնպաստի ուսուցման արդյունավետության:

Որպես կանոն ընդունված է վեպի սյուժեն ներկայացնել հենց սկզբի տողերով: Առաջարկում ենք վեպի ուսումնասիրությունը սկսել «Անուշ բերդ» գլխով : Վեպի սյուժեի այս մատուցումը սովորողներին պատմական դեպքերին տեղեկացնելու նպատակ է հետապնդում: Հայրենիքը սկսվում է հայրենասեր արքայից, որ ուներ ամուր ու հզոր հայրենիք կերտելու, կենտրոնաձիգ պետություն ստեղծելու իր տեսլականը: Արշակ Բ արքային ոչ միայն գեղարվեստական կերպար կներկայացնեն, այլև պատմական անձ, որն ի շահ հայրենիքի պատրաստ է անձնազոհության: Կարևոր ենք համարում ուսուցման ընթացքում ուշադրություն դարձնել նաև այն կերպարներին / երկրորդական/ , որոնց վերլուծությունը դասագրքում բացակայում է, սակայն պակաս հայրենասերներ չեն և իրենց արարքներով հայրենասիրության վառ օրինակ կարող են ծառայել: Արդյունավետ ուսուցում ապահովելու համար անհրաժեշտ ենք համարում՝ • Հիմնավորել՝ ինչու՞ է անհրաժեշտ ուսումնասիրել թեման և սովորողներին նախապատրաստել երկի ուսուցմանը,

• Ընտրել համապատասխան մեթոդներ, որոնք կնպաստեն հետաքրքրության խթանմանն ու ուսուցման որակի բարձրացմանը, նյութը սովորողներին դյուրընկալ ու մատչելի դարձնելուն

, • Ուսուցման գործընթացին մասնակից դարձնել բոլոր սովորողներին, կազմակերպել դերային խաղ

• Թեմայի ավարտին վերլուծել նպատակին հասնելու համար ընտրված մեթոդների տեղին լինելը

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: ,Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները; Ուսուցիչը նշում է, որ սովորողները ծանոթ են գրական ուղղություններին, առաջարկում է վերհիշել և մտագրոհի միջոցով ներկայացնել դրանք՝ նշելով յուրաքանչյուրին բնորոշ բնութագրիչներ: Գրի են առնվում բոլոր մտքերն ու գաղափարները: Իմաստի ընկալման փուլում վերհիշելու են իրենց դասագրքի ,Գրական ուղղություններ նյութը :Ձևավորվում է 3 խումբ: Կատարելու են փոքրիկ հետազոտական աշխատանք, որի նպատակը ոչ միայն գիտելիք ձեռք բերելն է, այլև համագործակցային աշխատանքը ,բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը:
Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:Ուստի ուսուցիչը հանդես է գալիս ռոմանտիզմի մասին կարճ դասախոսությամբ՝ օգտագործելով իր կողմից պատրաստված սահիկաշար;,

Սամվել պատմավեպի ուսուցման բաղադրամասերից են կերպարների բնութագրականները:

Շատ բարդ կերպար է Սամվելը՝ երիտասարդ ազնվական, ով հանուն հայրենիքի սպասում է հայրենադավ ծնողներին.սա, ի դեպ, բարդ վիճակ է: Այսօրվա աշակերտը մեծ մասամբ չի ընդունում Սամվելի արարքը.կարելի է նախապատրաստել ՝ հատվածաբար ներկայացնելով նրա հոր և քեռու կատարած ավերածությունները, նախճիրը, համաժողովրդական ցասումն ու ատելությունը և այն ամոթն ու վիշտը, որ տանջում է Սամվելին, և նա փորձում է մաքրել հայրենասեր Մամիկոնյան տոհմի պատիվը: Կարելի է առանձնացնել Մաշտոցի և Սահակ Պարթևի կերպարները՝նշելով ժամանակագրական փոփոխությամբ առավել հպարտացել է գաղափարական և հայրենասիրական հագեցվածությունը:

Անչափ հետաքրքիր են նախ վեպի կին կերպարները, որոնցից առանձնանում են

Փառանձեմ թագուհին, Աշխենը, Տաճատուհին, Որմիզդուխտ քույրերը։ Այս ընթացքում կարելի է զուգահեռներ անցկացնել արդեն ծանոթ կերպարների միջև, օրինակ՝ Ծովինարի և Փառանձեմի։

Փառանձեմ թագուհի

«Թող ես կորչեմ, թող ես ոչնչանամ, բայց Հայաստանը մնա»։

Ծովինար

«Աղեկն էն է,որես երթամ ։Ես մեկ ջան եմ, էրթամ,կորսվիմ, քանց մեր Հայաստան երկիր ավերի...»։

Սամվելի կերպարը հասկանալու համար, նրա վարքագիծը ընդունելու համար անդրադառնում ենք դավաճան իշխանների կերպարներին։

Ուսուցման հաջորդ բաղադրիչը լեզվի և ոճի հարցն է։ Վեպի ուսուցման ընթացքում կարելի է ուսուցչի կողմից առանձնացված բառաշարք տալ, հանձնարարել բացատրական բառարանից օգտվելով՝բացատրել նրանց դիմանկարը, հատվածներ առանձնացնել, փոխադրություն առանձնացնել, փոխադրություն հանձնարարել, 10-րոպեանոց շարադրանք՝ «Սամվել» պատմավեպի ընտանեկան հարաբերությունները», տրվում է բառաշարք և այդ բառաշարքից ըստ այունակների ներկայացնել պատմաբառերն ու հնաբառերը և այլ առաջադրանքներ։

## 3. «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի ուսուցումը

Մուրացանի գլուխգործոցի՝ «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի մասին գիտելիքը ձևավորելուց առաջ նախ պետք է ներկայացնել նաև մյուս պատմական գործերը՝ «Ռուզան» պատմական դրաման և «Անդրեաս երեց» վիպակը: Ուսուցիչը համառոտակի կպատմի այս ստեղծագործությունների սյուժեն, պատմական աղբյուրների մասին: Այս կերպարների գրականացումը տեսանելի է դարձնում, թե ինչպես, ինչ նպատատակով հայրենասեր անհատները մնում են ժողովրդի պատմական հիշողության մեջ, ամեն մի նոր սերնդի սովորեցնում սիրել հայրենիքը, ազգը, քան սեփական կյանքը:

Ուսուցիչը աշակերտին դաս-դասախոսության ընթացքում մանրամասն շարադրում է վեպի պատմական հիմքի, գրության շարժառիթի, սյուժեի և կառուցվածքի մասին:Իհարկե, չի մանրամասնում սյուժեն և կառուցվածքը ստուգելու համար՝ կարդացե՞լ է արդյոք պատմավեպը թե ոչ:

Ուսուցիչը նախապես հայտարարում է, որ բանավոր հարցման են ենթարկվելու բոլոր աշակերտները, պատմելու են վեպի տարբեր մասերը:Սա նպաստում է վեպի կառուցվածքի ըմբռնմանը, բանավոր խոսքի զարգացմանը, աշակերտի պատասխանատվության մեծացմանը:

,, Գևորգ Մարզպետունի,, պատմավեպի ուսուցման մեթոդներից կարող է լինել նաև

**խմբային աշխատանքը**, որի համար նախատեսում ենք երկու դասաժամ: Խմբային աշխատանքն ավելի հեշտ է լինում իրականացնել 15-20 հոգանոց դասարաններում, բայց քանի որ մենք աշխատում ենք նաև 10 հոգանոց դասարաններում,ուստի կարող ենք դասարանը բաժանել ենք 2-3 խմբերի: Բաժանումը կատարվում է հետևյալ սկզբունքով. յուրաքանչյուր խմբի մեջ առանձնանում են այն աշակերտները, որոնք հակված են այս կամ այն կերպարին: Հատուկ մեթոդով ձևավորվում են խմբերը՝ համապատասխան անուններով՝ «Գևորգ Մարզպետունի» խումբ, « «Աշոտ Երկաթ» խումբ, «Սահականույշ և Ասպրամ» խումբ: Խթանման փուլում խմբերին բաժանվում են հարցադրումներով թերթիկներ՝ կապված յուրաքանչյուր կերպարի համակողմանիորեն բնութագրման հետ: Օրինակ՝ «Գևորգ Մարզպետունի» խմբի համար.

1. քաղաքական գործիչը և ընտանիքի հայրը,
2. փիլիսոփա մտածողը և հմուտ զորավարը,
3. անձնվեր հայրենասերը:

«Աշոտ Երկաթ» խմբի համար.

1. անհատը և պետությունը,

2. զգացմո՞ւնք, թե՞ բանականություն,

3. ինչպե՞ս կվարվեինք մենք:

«Սահականույշ և Ասպրամ» խմբի համար.

1. Սահականույշը կին և թագուհի,

2. արդյոք հե՞շտ է ներելը դավաճանած ամուսնուն,

3. մեղավո՞ր էր Ասպրամը. ինչու՞…

Այս և նման հարցադրումներից հետո սկսում է վեպի բնագրի շուրջ աշխատանքը, որի համար տրամադրվում է 25-30 րոպե: Իմաստի ընկալման փուլում հանձնարարվում է նաև խճանկարով կամ գծապատկերով ցույց տալ հերոսների կապվածությունը մեկը մյուսի հետ: Ավարտելուց հետո՝ 2-րդ դասաժամին, յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը՝ վեպից մեջբերելով համապատասխան հատվածներ: Իսկ մնացած խմբերը հարցեր են նախապատրաստում: Կշռադատման փուլում ստացվում է բավականին աշխույժ քննարկում և վերլուծություն՝ կապված կերպարների հոգեբանական իրավիճակների տարբեր դրսևորումների հետ:

Այս փուլում կկիրառենք կիսատ նախադասություն մեթոդը

Ես այսօր սովորեցի.....

Ինձ զարմացրեց.....

Այսօրվա դասի ամենաօգտակար բանը.....

Ինձ հետաքրքրեց.....

Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ....

Մի բան,որ չհասկացա.....

Մի բան ,որ կուզեի ավելին իմանալ.....

Այս դասից հետո ես զգում եմ.....

Այս դասից ավելին կսովորեի եթե.....

Այնուհետև դասն ամփոփվում անդրադարձի մեթոդով:

**«Գևորգ Մարզպետունի» թեմայի ամփոփում**

Կմախքի գծապատկերի հարցերը կդնենք հերթականությամբ և անմիջապես կպատասխանենք:

1. Մեկ բառ, որն արտահայտում է բնագրի իմաստը: «Գևորգ Մարզպետունու» համար այդ մեկ բառն ազատությունն է: Ազատություն:



2. Մեկ արտահայտություն, որը գլխավորն է բնագրի համար:

«Մի ձեռքը ծափ կտա» և «մի ծաղկով գարուն կգա»:

3. Մեկ նախադասություն, որը գլխավորն է բնագրի համար:

Ազգերի զորությունը ընտանիքների մեջ է: Զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիքներ, սիրով, միությամբ, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներեկ արտահայտություն, որը գլխավորն է բնագրի համար:

4. Ավարտի՛ր միտքը. «Ամենալավը դասի մեջ այն է, որ...»: Ամենալավը դասի մեջ այն է, որ ժողովուրդը երբեք չի ընկճվել, այլ հավատով սպասել է լավ օրերի:

**Դերենիկ Դեմիրճյան**

**«Վարդանանք» պատմավեպի ուսուցման առանձնահատկությունները**

«Վարդանանքը» ավագ դպրոցում անցնելիք III վեպն է: Ուսուցման ընթացքում կարևոր հանգամանքներից է վեպի ռեալիստական լինելը, գրելու շարժառիթը: Հայաստանը նախկին Խորհրդային Միության հանրապետություններից մեկն էր, որ ը 1941 թվականի հունիսի 22-ին ի թիվս այլ հանրապետությունների մտավ գերմանական ֆաշիզմի հետ օրհասական կռվի մեջ: Կատարվում է միջառարկայական կապի ապահովում: Բացատրվում է ֆաշիզմի հակամարդկային բնույթը, հիշեցվում Հիտլերի կողմից արված հանրահայտ արտահայտությունը հայոց Մեծ եղեռնի հետ կապված և այս ամենից հետո ուսուցիչը նշում է , որ Դեմիրճյանը պարտավոր զգաց իրեն բարձրացնելու հայերի ազգային ոգին, և դրա ամենահարմար օրինակը 451 թվականի Ավարայրի հերոսամարտն էր: Նա հզոր երևակայությամբ, ոգևորությամբ վերակենդանացրեց պատմական անցյալը: Աշակերտի մեջ ձևավորվում է սթափ հայրենասիրություն:

Ուսուցիչը ներկայացնում է «Վարդանանք»-ի դարաշրջանը: Կարելի է զուգահեռներ անցկացնել մարզպանական Հայաստանի և ԼՂՀ-ի միջև.կրոնական ճնշումը ազգային ինքնությունը կորցնելու ամենավտանգավոր գործոնն է

Հաշվի առնելով քառասունչորսօրյա արցախյան պատերազմի դեռևս թարմ վերքերը՝ խնդիրը առավել անհրաժեշտ է դիտարկել արդիականության լույսի ներքո: Տվյալ դեպքում կարելի է օգտվել ,,պրիզմա,, մեթոդից՝ գլխավոր հասկացություն ունենալով պատերազմ բառը: Օգնող հարցեր կարող են լինել՝ ի՞նչ է պատերազմը, ինչպիսի՞ պատերազմներ են լինում

ա) նվաճողական,

բ) ազգային-ազատագրական

 ինչպիսի՞ նվաճողական պատերազմներ գիտեք, ինչպիսի՞ ազգային-ազատագրական պատերազմներ գիտեք, ինչպիսի՞ պատերազմ էր Առաջին համաշխարհային պատերազմը Ռուսաստանի և Թուրքիայի համար, ինչպիսի՞ պատերազմ էր Առաջին համաշխարհայինը

հայության տեսանկյունից, ովքե՞ր են օգտվում պատերազմներից, ովքե՞ր են տուժում պատերազմներից: Պրիզմայի կիրառման դեպքում վերջնարդյունքում եզրակացնում ենք, որ պատերազմը չարիք է՝ կախված ժողովրդի գլխին.




Պատմությունից միասին վեր կհիշենք նաև այլ հերոսամարտեր, որոնց ժամանակ դրսևորվել է հայ ժողովրդի անկոտրում կամքը ու պատրաստակամությունը՝ պայքարել հանուն հայ կոչվելու բնածին իրավունքի, որի դեմ, սակայն բռնացել են շատերը և բազմիցս:

Սյուժեի յուրացման ստուգման համար մեծ դեր կարող են խաղալ ստուգողական հարցումները, վեպի տարբեր հատվածների նյութն ընդգրկող տնային փոխադրությունները (սա կարելի է հանձնարարել վեպի ուսուցման յուրաքանչյուր դասաժամին):

Անդրանդառնում ենք վեպում առկա երկու կոնֆլիկտին՝հայ-պատմական, վարդանանց և վասակյաններին:Հանձնարարում ենք գրականագիտական բառարաներից դուրս գրել բառ- հոդվածները՝կոնֆլիկտ, հանգույց, գագաթնակետ: Նման առաջադրանքները, թեև դժվար, սակայն մղում են գիտելիքներ ունենալուն:

Կերպարների ուսուցման մեջ առանձնանում ենք Վարդան Մամիկոնյանի, Վասակ Սյունեցու կերպարները: Պետք է առանձնացնել նաև Վ.Մամիկոնյանի կոչը, որով նա

դիմում է Ավարայրի ճակատամարտի մասնակիցներին,կամ ի՞նչն է Վ.Մամիկոնյանի կերպարում ամենակարևորը, ինչպիսի՞ հարցերում է նա անվերապահորեն մեծություն, ո՞րն է նրա կերպարի դրամատիզմը, ինչի՞ց է երևում, որ նա հմուտ զորավար է և նման հարցադրումները պետք է օգնեն աշակերտին ինքնուրույն խոսելու, գրելու:

Աշակերտը Վասակ Սյունու կերպարով սովորում է ատել դավաճանությունը, ազգային շահը ոտնահարող պետական գործիչին:

Անհրաժեշտ է կարդալ Եղիշեի պատմության հատվածները: Օրինակ՝ Մեծ Տիկինն իրեն պահում է որպես հայոց եղերամայր, ինչպիսի խոր ցնցումով է ընդունում կեղծ ուրացության լուրը, վեր է կենում անկողնուց և շտապում գերեզմանատուն՝ բոթը ամուսնուն հաղորդելու, նրա մասնակցությունը Ավարայրի ճակատամարտին և այլն:

Ավարայրի հերոսամարտը այն թեման է, որով կարելի է վերջնականորեն ձևավորել աշակերտի պատկերացումները արդարացի և անարդարացի պատերազմների մասին: Ավարայրը հայկական դարավոր մտածողության մեջ ինքնապաշտպանության, արժանապատվության, ազգային խորհրդանիշն է: Վեպի սյուժեին, կերպարներին, լեզվի և ոճի առանձնահատկություններին հանգամանալից անդրադառնալուց հետո անպայման պետք է նշվեն այն ստեղծագործությունները, որոնք կրկին այս երևույթի մասին են, օրինակ՝ Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակավոր» շարականը, Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի», Ռաֆայել Պատկանյան «Քաջ Վարդան Մամիկոնյանց մահը», պոեմը, հատվածը՝ «Հիմի է՞լ լռենք, եղբարք» և այլն:

## Պատմավեպերի լեզուն և ոճը

Պատմավեպերի ուսուցման կարևոր խնդիրը նրանց լեզվի ու ոճի հարցերը, որոնց հանգամանալից անդրադառնալը նպաստում է աշակերտի ստեղծագործական ունակությունների զարգացմանը, նրա մեջ կմշակեն հատուկ դիտողականություն:

Ոճի ուսուցման առումով պատմավեպերը հարուստ գանձարան են:Անպայման պետք է անդրադառնալ պատկերավորման միջոցներին, պատմաշրջանի կոլորիտը ընգծող արտահայտչական միջոցներին: Վեպերի ուսուցման ժամանակ տարբեր տեսակի գրավոր աշխատանք հանձնարարելուն և ստուգման ձևերից կարելի է գործածել հետևյալը՝

1) Բաղադրյալ հատուկ անունները, որ հանդիպում են այս հատվածում, և նրանց ուղղագրական արժեքը:

2) ա.Պատմաբառեր, որ կան հատվածում:

բ.Հնաբանություններ, որ կան հատվածում:

գ.Պատմաբառերի և հնաբանությունների տարբերությունը:

3) Գրական- գրքային և գրական-համագործածական բառերի առկայությունն այս հատվածում:

4) Մեկից ավելի բաղադրիչ բառերի կազմության առանձնահատկությունները, ստուգաբանությունը (օրինակ՝ ապակեբուռ, սենեկապետ, դիպակազարդ և այլն):

Բառաշարքից ըստ սյունակների առանձնացրե՛ք պատմաբառերն ու հնաբանությունները.բերդակալ, հիսնապետ, յուր, բոլորշի, օթոց,դիպակ, գեղարդավոր, դշխո(յական) և այլն:

## Եզրակացություն

Հայոց ազգային գիտակցության հիմքը հայրենիքի գաղափարն է, որ միշտ արժևորել է մեր պատմության բոլոր փուլերը։Դարեր շարունակ հայը խնդիր է ունեցել,պաշտպանել իր հայրենիքը, անաղարտ պահել իր լեզուն և մշակույթը։ Պատմական իրադարձություններն իրենց արձագանքն են թողել մեր պատմիչների ու վիպասանների երկերում։

Ուսումնասիրված մեծածավալ երկերը, այսօր նույնքան արդիական են, որքան անցյալում։ Երկերի ուսուցումը նպաստեց դաստիարակչական բնույթի հարցերի լուծմանը, սովորողների ճանաչողական , տրամաբանական , համագործակցային, ստեղծագործական ու ինքնուրույն գործունեության կարողությունների ու հմտությունների զարգացմանը։

Թեմայի ուսուցման ընթացքում զարգանում են սովորել սովորելու, լեզվական գրագիտություն, մշակութային կարողունակությունները:

Երկար տարիների փորձը և կատարված հետազոտությունը հանգեցնում են հետևյալ դրույթներին՝

1.«Սամվել», «Գևորգ Մարզպետունի»,«Վարդանանք» պատմավեպերն իրենց բովանդակությամբ նպաստում են աշակերտի ազգային բնավորության և առողջ հայրենասիրության ձևավորմանը:

2.Պատմավեպերը նպաստում են գրականագիտական հասկացություններից աշակերտի գիտելիքների ձեռքբերմանը:

3.Նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը:

4.Պատմավեպերի ուսուցումը արդյունավետ է դառնում բնագրի բովանդակությունը գրավոր փոխադրություններով ստուգելը, վերլուծական, գեղարվեստական, ստեղծագործական, կերպարի բնութագիր շարադրություններով,ստուգողական հարցաշարերով:

5.Նպաստում է աշակերտի բանավոր խոսքի հստակությանը, դիպուկությանը, ճշգրտությանը:

6.Ձևավորում է արժեքային համակարգ, որի գիտակցումը հույժ կարևոր է այսօրվա հայ աշակերտի համար՝ հայ ժողովրդի ազգային ինքնուրույնության պահպանում, անմնացորդ նվիրում հայրենիքին՝ հատկապես վտանգի պահին, բոլոր տեսակի նվաճողական պատերազմների մերժում:



Հայ գրականությունը դպրոցներում ու բուհերում այսօր առավել անտեսված է թվում, այն նեղ ազգային արժեքի է վերածվել այն դեպքում, երբ ուրիշ առարկաներ, ավելի

միջազգային ու հեռանկարային լինելով, չունանալով ազգային սահմանափակում, առավել գրավում են ընդունակ աշակերտներին:Չանտեսելով ոչ մի առարկայի դեր՝ ուզում ենք հիշեցնել, որ հայ աշակերտը պետք է գիտության այլ բնագավառներ մտնի՝ ազգային ինքնագիտակցության մեծ պաշարով, իսկ դրա նախապայմանը հայ գրականության պսակը կազմող  երեք պատմավեպերի յուրացումն է:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. Ռաֆֆի ,Սամվել,,
2. Մուրացան,ԳևորգՄարզպետունի,,
3. 3.Դ.Դեմիրճյան ,Վարդանանք,,
4. Հր.Թամրազյան, Սովոտահայ գրականության պատմություն,,
7. Հր,.Թամրազյան, Դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար
8. Հայ գրականություն, Ծրագիր հանրակրթական դպրոցների 9-10-րդ դասարանների համար
9. Ռուզան Դոլուխանյան ,Պատմավեպի ուսուցումը ավագ դպրոցումե
10. 9.Հայ գրակնություն, Ուսուցչի ձեռնարկ 10-12-րդ դասարաններ

,

11.